


Տևողությունը – 150րոպե



1. Քանի՞ տատիկ է ունեցել ձեր տատիկի պապիկը:
  - 1) 2
  - 2) 8
  - 3) 16
  - 4) այլ պատասխան
2. Քանի՞ ուղղանկյուն է պատկերված նկարում:
  - 1) 10
  - 2) 11
  - 3) 12
  - 4) այլ պատասխան
3. 4765 թիվը կազմված է չորս հաջորդական թվանշաններից: Գտնել այդ հատկությամբ օժտված 4765-ից մեծ հաջորդ թվի թվանշանների գումարը:
  - 1) 18
  - 2) 14
  - 3) 10
  - 4) այլ պատասխան
4. Նախորդ ձմեռվա ընթացքում Բոբիկ շունը կորցրեց իր քաշի  $\frac{1}{4}$  մասը, իսկ ամռանը չաղացավ 20%-ով և դարձավ 9կգ: Որքա՞ն էր Բոբիկի քաշը նախորդ ձմեռվանից առաջ:
  - 1) 9կգ
  - 2) 10կգ
  - 3) 11կգ
  - 4) այլ պատասխան
5. Մարինեն, Նարինեն ու Կարինեն հագել էին կարմիր, կապույտ, սպիտակ գույնի շրջազգեստներ և կոշիկներ: Հայտնի է, որ միայն Մարինեի շրջազգեստի և կոշիկի գույներն են համընկնում: Նարինեի հագին կապույտ գույն չկար, իսկ Կարինեն հագել էր սպիտակ կոշիկներ: Ի՞նչ գույնի է Կարինեի շրջազգեստը:
  - 1) սպիտակ
  - 2) կապույտ
  - 3) կարմիր
  - 4) հնարավոր չէ որոշել
6. Գումարման գործողության մեջ զույգ թվանշանները փոխարինել են \* -երով:
 

Գտնել \* -երի գումարը:

	1	*	7
+	3	*	5
	3	*	1
	<hr style="width: 100%;"/>		
	*	9	3

  - 1) 15
  - 2) 16
  - 3) 24
  - 4) այլ պատասխան
7. Դպրոցի 5-րդ դասարաններում սովորում են 270, իսկ 6-րդ դասարաններում 180 աշակերտներ: Հայտնի է, որ 5-րդ դասարանցիների մեջ տղաների և աղջիկների քանակը հարաբերում է ինչպես 5:4, իսկ 6-րդ դասարանցիների մեջ՝ 2:3-ի: Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ՝
  - 1) տղաները շատ են ավելի քան 4%-ով
  - 2) տղաները շատ են, բայց 4%-ից քիչ չափով
  - 3) աղջիկները շատ են ավելի քան 4%-ով
  - 4) աղջիկները շատ են, բայց 4%-ից քիչ չափով
8. Վազգենն իրար հետևից գրում է բնական թվերը՝ 12345678910111213... և դադարեցնում է գրելը, երբ առաջին անգամ նկատում է իրար հետևից երեք անգամ գրված 7 թվանշանը: Քանի՞ թվանշան գրեց Վազգենը:
  - 1) 146
  - 2) 78
  - 3) 156
  - 4) այլ պատասխան

Տևողությունը – 150րոպե

9. Զամբյուղում եղած 500 գնդակների 80%-ը կարմիր է, իսկ մնացածը՝ կապույտ: Քանի՞ կարմիր գնդակ է պետք հանել զամբյուղից, որպեսզի այնտեղ մնացած գնդակների 75%-ը լինի կարմիր:
- 1) 25                      2) 50                      3) 75                      4) 100
10. Երկու թվերի գումարը հավասար է 232: Գտնել այդ թվերի արտադրյալը, եթե նրանցից մեկը մյուսի բաժանելիս քանորդում ստացվում է 3, իսկ մնացորդում 28:
- 1) 19488                  2) 11152                  3) 9231                      4) այլ պատասխան
11. Եռանիշ թիվը բազմապատկեցին իր թվանշանների գումարով և արդյունքում ստացվեց 2254: Գտնել այդ թիվը:
12. Պահարանում կան գնդակներ՝ 30%-ը կանաչ, 20%-ը մոխրագույն, 15%-ը դեղին, 10%-ը սև, իսկ մնացած 30-ը կապույտ: Քանի՞ մոխրագույն գնդակ կլինի պահարանում, եթե կանաչ գնդակների կեսը փոխարինեն մոխրագույն գնդակներով:
13. Տաքսի ծառայության գնացուցակն այսպիսին է՝ մինչև 4 կիլոմետրն արժե 500 դրամ, այնուհետև յուրաքանչյուր կիլոմետր երթևեկելն արժե 60 դրամ: Առավելագույն քանի՞ կիլոմետր կարող է երթևեկել Լևոնը, եթե նա ունի 4700 դրամ:
14. 1, 2, 3, 4, 5, 6 թվանշաններն օգտագործելով մեկական անգամ կազմում են երկու եռանիշ թվեր: Գտնել այդ թվերի դրական տարբերության ամենավոքը հնարավոր արժեքը:
15. Գրատախտակին գրված են 1, 2 և 3 թվերը: Ամեն քայլի թույլատրվում է այդ թվերից որևէ մեկը փոխարինել իրենից 3-ով կամ 5-ով մեծ թվով: Ամենաքիչը քանի՞ քայլ է պետք անել, որպեսզի գրատախտակին գրված երեք թվերը դառնան իրար հավասար:

Առարկայական հանձնաժողովի  
նախագահ՝



Սմբատ Գոգյան